ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Սարգիս Հովհաննեսի Գևորգյանի «Սննդային թափոնների կառավարման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ աշխարհի բնակչության ավելի քան 10 %-ը, իսկ Հայաստանի հարյուր հազարավոր մարդիկ պայքարում են աղքատության և պարենային անապահովության դեմ, հսկայական քանակությամբ լիովին ուտելի սնունդ հայտնվում է աղբանոցներում՝ կարիքավորներին հասնելու փոխարեն: Սա միայն բնապահպանական խնդիր չէ, այլև սոցիալական, տնտեսական և բարոյական մարտահրավեր է, ինչ հաղթահարման համար կառավարությունները, գիտական հանրությունը փորձում են գտնել արդյունավետ լուծումներ:

Սարգիս Հովհաննեսի Գևորգյանի ատենախոսությունը ևս մեկ փորձ է՝ այդպիսի լուծումներ գտնելու ճանապարհին, որ նվիրված է Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների կառավարման հիմնահարցերի ուսումնասիրությանը, դրանց սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունների գնահատմանը, ինչպես նաև ոլորտի կառավարման կատարելագործմանն ուղղված գործնական առաջարկությունների մշակմանը: Հետազոտության թեման բացառիկ արդիականություն ունի ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մակարդակներում՝ պայմանավորված կայուն զարգացման, շրջանաձև տնտեսության, պարենային անվտանգության և կլիմայի փոփոխության հիմնախնդիրների խորացմամբ:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորված է այն հանգամանքով, որ աշխարհում արտադրվող սննդամթերքի զգալի մասը չի սպառվում և վերածվում է թափոնի՝ առաջացնելով տնտեսական կորուստներ, բնական ռեսուրսների անարդյունավետ օգտագործում և ջերմոցային գազերի լրացուցիչ արտանետումներ: Չնայած դրան, Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների կառավարման հարցերը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն, իսկ ոլորտում առկա տեղեկատվական, օրենսդրական և կառավարչական հիմնախնդիրները պահանջում են գիտականորեն հիմնավորված լուծումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակ է սահմանվել՝ Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների կառավարման հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրության հիման վրա ձևավորել խնդրի լուծման ուղիներ և մշակել ՀՀ սննդային թափոնների կանխարգելման ու նվազեցման ուղղությամբ հեռանկարային զարգացման գործնական կառուցակարգեր: Սահմանված նպատակին հասնելու համար՝ հեղինակը ձևակերպել և հաջողությամբ լուծել է հետևյալ խնդիրները.

(1) ուսումնասիրել է սննդային թափոնների կառավարման պատմական զարգացումները և ժամանակակից մոտեցումները.
(2) վերլուծել Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման ոլորտին առնչվող օրենսդրությունը, ուսումնասիրել մարզային ռազմավարական պլանները՝ բացահայտելով սննդային թափոնների կառվարմանն առնչվող օրենսդրական և ռազմավարական պլանավորման հիմնախնդիրները.
(3) ուսումնասիրել է համայնքներում բնակչության վերաբերմունքը սննդային թափոնների կառավարման խնդրի նկատմամբ՝ բացահայտելով գերակշռող վարքագծային մոտեցումները և լուծումների վերաբերյալ ընկալումները.
(4) ուսումնասիրել է Հայաստանի հանրային սննդի կետերում սննդային թափոնների կառավարման հիմնական գործելակերպը.
(5) կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների համադրմամբ բացահայտել է ՀՀ սննդային թափոնների կառավարման համակարգում առկա հիմնախնդիրները.
(6) տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ՝ մշակել ՀՀ-ում սննդային թափոնների կառավարման բարելավման կառուցակարգ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (117 աղբյուր) և հավելվածներից: Աշխատանքի կառուցվածքը տրամաբանական է, իսկ գլուխների հաջորդականությունը նպաստում է հետազոտական խնդիրների ամբողջական բացահայտմանը:

Աշխատանքի ներածական մասում ատենախոսն անդրադարձել է թեմայի արդիականությանը, սահմանել է հետազոտության նպատակը և ձևակերպել խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացրել է հետազոտության մեթոդաբանությունը և պաշտպանության ներկայացվող նորույթը: Ատենախոսության կառուցվածքը համահունչ է հետազոտության նպատակից բխող խնդիրներին:

Առաջին՝ «*Սննդային թափոնների կառավարման խնդիրը որպես գլոբալ սոցիալ-տնտեսական և բնապահպանական մարտահրավեր*» գլխում, ուսումնասիրվում է սննդային թափոնների կառավարման խնդիրը՝ որպես ժամանակակից աշխարհի կարևորագույն սոցիալ-տնտեսական և բնապահպանական մարտահրավեր: Առաջին ենթագլխում ներկայացվում է սննդային թափոնների կառավարման հայեցակարգի պատմական զարգացումը՝ սկսած նախաարդյունաբերական շրջանից մինչև ժամանակակից կայուն զարգացման և շրջանաձև տնտեսության գաղափարների ձևավորումը: Վերլուծվում են սննդային թափոնների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Food and Agriculture Organization (FAO), եվրոպական FUSIONS ծրագրի և United States Environmental Protection Agency-ի կողմից առաջարկված սահմանումները, ինչպես նաև հետխորհրդային և հայկական իրավական մոտեցումները: Ցույց է տրվում, որ սննդային թափոնների ընկալումը ժամանակի ընթացքում վերափոխվել է «անպետք մնացորդի» գաղափարից դեպի արժեքավոր ռեսուրսի և կայուն զարգացման քաղաքականության կարևոր բաղադրիչի ընկալում:

Երկրորդ ենթագլուխը խնդիրը դիտարկում է համակարգային մտածողության շրջանակում՝ ներկայացնելով սննդային թափոնների առաջացմանը նպաստող հիմնական դերակատարներին և նրանց փոխազդեցությունները: Քննարկվում են սննդի մատակարարման ամբողջ շղթայում ներգրավված շահառուները՝ ֆերմերներից մինչև վերջնական սպառողներ, ինչպես նաև արտաքին միջավայրի գործոնները՝ պետական քաղաքականությունը, հետազոտական հաստատությունները, բիզնես ռազմավարությունները, տեխնոլոգիական զարգացումները և բնական սահմանները: Հիմնավորվում է, որ սննդային թափոնների խնդիրը բազմագործոն և փոխկապակցված բնույթ ունի, ուստի դրա արդյունավետ կառավարումը պահանջում է համալիր և միջգիտակարգային մոտեցումներ:

Երրորդ ենթագլխում ուսումնասիրվում են սննդային թափոնների տնտեսական և բնապահպանական հետևանքները: Ներկայացվում են տվյալներ, որոնք փաստում են, որ սննդային թափոնները հանգեցնում են զգալի ֆինանսական կորուստների, հողային և ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների աճի: Վերլուծվում է սննդային թափոնների ազդեցությունը կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի և բնական ռեսուրսների սպառման վրա: Միաժամանակ ներկայացվում են սննդային թափոնների չափման միջազգային մեթոդաբանությունները, մասնավորապես՝ European Union-ի կողմից առաջարկվող ուղղակի և անուղղակի չափման գործիքները, ինչպես նաև դրանց կիրառման առավելություններն ու սահմանափակումները:

Ընդհանուր առմամբ, գլուխը ցույց է տալիս, որ սննդային թափոնների խնդիրը դուրս է գալիս զուտ թափոնների կառավարման շրջանակներից և հանդիսանում է տնտեսական արդյունավետության, սոցիալական պատասխանատվության և բնապահպանական կայունության փոխկապակցված խնդիր, որի լուծումը պահանջում է համակարգված քաղաքականության իրականացում, գիտականորեն հիմնավորված որոշումների ընդունում և բազմաշահառու համագործակցություն:

Երկրորդ՝ «*Սննդային թափոնների կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն*» գլխում, ատենախոսը ներկայացնում Հայաստանում, մասնավորապես Երևանում, սննդային թափոնների կառավարման խնդրի ուսումնասիրության, Հունաստանի համեմատական վերլուծության արդյունքները:

Ատենախոսը նշում է, որ սննդային թափոնների կառավարումը երկար տարիներ պետական քաղաքականության առաջնահերթություններից չի եղել: ԽՍՀՄ փլուզումից հետո երկրի ուշադրությունը կենտրոնացել է սոցիալ-տնտեսական և անվտանգության խնդիրների վրա, ինչի հետևանքով թափոնների կառավարումը, շրջանաձև տնտեսությունը և սննդային կորուստների կանխարգելումը մնացել են երկրորդական: Հանրային իրազեկվածությունը ևս եղել է ցածր, իսկ թեմայի շուրջ քննարկումները՝ սահմանափակ:

Վերջին տարիներին, հատկապես ԵՄ-ի հետ համագործակցության և CEPA համաձայնագրի շրջանակում, Հայաստանը սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի պահպանությանը և թափոնների կառավարմանը: Սակայն դեռևս առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ բացեր:

Երևանում ատենախոսի կատարած հետազոտությամբ (385 հարցվող) ստացվել են ուշագրով արդյունքներ. ամենաշատ թափվող սննդամթերքը հացն է (44.7%), երկրորդ

տեղում են բանջարեղենը (28.6%), երրորդ տեղում՝ մրգերը (27.6%), այնուհետև կարտոֆիլը և այլ սննդատեսակներ:

Հաշվարկների համաձայն՝ մեկ անձի կողմից տարեկան հացի (ներառյալ լավաշը) վատնումը միջինում կազմում է շուրջ 13,8 հազ. դրամ, իսկ մրգերի դեպքում՝ 16,7 հազ. դրամ: Միևնույն ժամանակ հարցվածների ինքնագնահատականով սննդային թափոնների խնդրի վերաբերյալ գիտելիքների միջին մակարդակը կազմել է ընդամենը 4.1/10, ինչը վկայում է իրազեկվածության պակասի մասին:

Հայաստանի մարզային ռազմավարական զարգացման ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ սննդային թափոնների թեման գործնականում բացակայում է բոլոր մարզային փաստաթղթերից: Թեև առանձին ծրագրերում անդրադարձ կա ընդհանուր թափոնների կառավարմանը, սննդային թափոնների կանխարգելման, չափման կամ կառավարման որոշակի կառուցակարգեր նախատեսված չեն: Երևանում նույնպես բացակայում է սննդային թափոնների առանձին հավաքման համակարգը:

Հունաստանի և Հայաստանի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու երկրներն էլ բախվում են սննդային թափոնների կառավարման խնդիրներին, սակայն, տարբերությամբ, որ Հունաստանում վերջին տարիներին մշակվել է ավելի համակարգված քաղաքականություն, թեպետ, ըստ ատենախոսի ստացած արդյունքների՝ Հունաստանը դեռևս ունի բարձր սննդային թափոնների մակարդակ՝ տարեկան մոտ 191 կգ մեկ շնչի հաշվով, ինչը գերազանցում է ԵՄ միջին ցուցանիշը:

Հայաստանում, հակառակ դրան, բացակայում են՝ սննդային թափոնների կառավարման ազգային ռազմավարությունը, սննդային թափոնների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման համակարգը, կենսաթափոնների առանձին հավաքման և վերամշակման ենթակառուցվածքները, օրենսդրական հստակ սահմանումները և թափոնների հիերարխիայի կիրառումը:

Ատենախոսի կատարած ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ Հայաստանում սննդային թափոնների կառավարումը դեռևս գտնվում է զարգացման սկզբնական փուլում: Չնայած միջազգային պարտավորություններին և որոշ տեղական նախաձեռնություններին, բացակայում են համակարգված քաղաքականությունը, օրենսդրական կարգավորումները և հանրային լայն իրազեկումը:

Հիմնավորվում է, որ Հայաստանի համար սննդային թափոնների արդյունավետ կառավարումը կարող է դառնալ ոչ միայն բնապահպանական, այլև տնտեսական զարգացման կարևոր ուղղություն՝ նպաստելով շրջանաձև տնտեսության ձևավորմանը և ԵՄ չափանիշներին մոտենալուն:

ԵՄ-27 երկրների 2021–2023 թվականների պանելային տվյալների հիման վրա իրականացված տնտեսաչափական վերլուծությունը ցույց է տվել, որ սննդային թափոնների առաջացումը պայմանավորված է ոչ միայն սպառողական վարքագծով, այլև մի շարք սոցիալ-տնտեսական և բնապահպանական գործոններով: Հետազոտության արդյունքները փաստում են, որ բնակարանային ծախսերի գերծանրաբեռնվածությունը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցությունը և բնակչության խտությունը դրական ազդեցություն ունեն սննդային թափոնների ծավալի վրա, մինչդեռ կրթության մակարդակի բարձրացումը, բնապահպանական հարկերը և նյութերի շրջանաձև օգտագործումը նպաստում են դրանց կրճատմանը:

Հաուսմանի թեստի արդյունքներով առավել նպատակահարմար է ճանաչվել պատահական էֆեկտների մոդելը, որի հիման վրա ստացված գնահատականները ցույց են տալիս, որ տնտեսական բարեկեցության աճը հաճախ ուղեկցվում է սպառման ընդլայնմամբ և սննդի թափոնների ավելացմամբ, իսկ բարձրագույն կրթությունը ձևավորում է ավելի պատասխանատու և կայուն սպառողական վարքագիծ: Միաժամանակ, շրջակա միջավայրի քաղաքականության գործիքները և շրջանաձև տնտեսության սկզբունքների կիրառումը կապված են սննդային թափոնների նվազման հետ:

Ուսումնասիրությունը հաստատում է, որ սննդային թափոնների խնդիրը բազմագործոն բնույթ ունի և պահանջում է համալիր քաղաքական մոտեցում, որը կհամադրի կրթական, տնտեսական, հարկաբյուջետային և բնապահպանական միջոցառումները: Ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի որ տնտեսական զարգացման, սպառողական վարքագծի փոփոխության և եվրոպական փորձի աստիճանական ներմուծման պայմաններում ԵՄ-ում բացահայտված միտումները կարող են կիրառելի լինել նաև ազգային մակարդակում՝ սննդային թափոնների կանխարգելման և կառավարման արդյունավետ քաղաքականությունների մշակման տեսանկյունից:

Երրորդ՝ «*Սննդային թափոնների կառավարման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում*» գլխում, ատենախոսը, հիմնվելով Սևան համայնքում իրականացված մասնակցային կերպարահենք թեմատիկ վերլուծության (PPBTA) արդյունքների վրա, փորձել է բացահայտել սննդային թափոնների կառավարման առնչությամբ համայնքի անդամների վերաբերմունքը, խնդիրների ընկալումները և լուծումների վերաբերյալ պատկերացումները: Հետազոտությանը մասնակցել են 60 շահառուներ՝ տնային տնտեսությունների, բիզնեսի, կրթական ոլորտի, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Վերլուծության արդյունքում ձևավորվել են վեց հավաքական կերպարներ, որոնք արտացոլում են համայնքում առկա հիմնական վարքագծային և արժեքային դիրքորոշումները.

- **«Նահապետ»** կերպարը ներկայացնում է փոփոխությունների նկատմամբ թերահավատ և իներտ մոտեցում ունեցող բնակիչներին: Նրա վարքագիծը պայմանավորված է ինստիտուցիոնալ անվստահությամբ, սոցիալական օտարմամբ և սեփական մասնակցության արդյունավետության նկատմամբ կասկածներով:
- **«Շահեն»** կերպարի համար հիմնական շարժառիթը տնտեսական շահն է: Սորտավորումը կամ այլ էկոլոգիական վարքագիծը դիտարկվում է միայն այն դեպքում, երբ ապահովում է նյութական օգուտ:
- **«Լուսինե»** կերպարը մարմնավորում է աստիճանական փոփոխությունների կողմնակիցներին: Այս խումբը կարևորում է ենթակառուցվածքների հասանելիությունը, հարմարավետությունը և գործնական լուծումները:
- **«Աֆրոդիտե»** կերպարը ներկայացնում է էկոլոգիական բարձր գիտակցություն ունեցող ակտիվ փոքրամասնությանը, որի վարքագիծը հիմնված է ներքին արժեքների և համայնքային պատասխանատվության վրա:
- **«Իսկուհի»** կերպարը բնութագրվում է համակարգի նկատմամբ անվստահությամբ և համոզմամբ, որ անհատական ջանքերը արդյունք չեն տալիս, եթե բացակայում են տեսանելի արդյունքներն ու խթանները:

- **«Վրեժ»** կերպարը կողմնակից է խիստ վերահսկողության և պատժամիջոցների կիրառմանը՝ համարելով, որ միայն այդպես հնարավոր է փոխել մարդկանց վարքագիծը:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ սննդային թափոնների կառավարման հիմնական խոչընդոտները պայմանավորված են ոչ թե քաղաքացիների անտարբերությամբ, այլ՝ ինստիտուցիոնալ վստահության, իրազեկման և գիտելիքի պակասով, տնտեսական և սոցիալական շարժառիթային հակասություններով, ենթակառուցվածքային սահմանափակումներով, համայնքային մասնակցության ցածր մակարդակով:

Սևանում իրականացված հետազոտությունը բացահայտում է վստահության, մոտիվացիայի և ենթակառուցվածքների հետ կապված խնդիրները, իսկ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթության, թվայնացման, ճկուն կառավարման և խրախուսման համակցությունը կարող է զգալիորեն նվազեցնել սննդային թափոնների ծավալները: Հետևաբար, ՀՀ-ում հաջող քաղաքականությունը պետք է հիմնված լինի համայնքային մասնակցության, ինստիտուցիոնալ վստահության ամրապնդման և միջազգային լավագույն փորձի տեղայնացված կիրառման վրա:

Եզրակացվում է, որ արդյունավետ համակարգ հնարավոր է ձևավորել միայն այն դեպքում, երբ համադրվեն կրթական, հաղորդակցական, խրախուսման, վերահսկողության և ենթակառուցվածքային միջոցառումները:

«Սննդային թափոնների կառավարման միջազգային փորձի ներդրման հեռանկարները ՀՀ-ում» ենթաբաժնում իրականացվել է Հայաստանի և Հունաստանի ռեստորանային ոլորտներում սննդային թափոնների կառավարման համեմատական ուսումնասիրություն՝ կիրառելով FsQCA (Fuzzy-set Qualitative Comparative Analysis) մեթոդաբանությունը:

Նպատակ է հետապնդվել՝ բացահայտել այն գործոնների համակցությունները, որոնք նպաստում են ռեստորաններում սննդային թափոնների նվազեցմանը: Ուսումնասիրվել են հետևյալ հիմնական պայմանները. աշխատակիցների կրթություն և իրազեկվածություն (EA), հաճախորդների ընտրության ընդլայնում (CCE), ճկուն սննդառության տարբերակներ և մնացորդները տուն տանելու հնարավորություն (FDO), ապրանքների կառավարման թվային համակարգերի ներդրում (DTIM):

Վերլուծությունը ցույց է տվել, որ սննդային թափոնների նվազեցման համար բավարար են մի քանի տարբեր պայմանական համակցություններ, սակայն որևէ առանձին գործոն ինքնուրույն բավարար չէ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Հունաստանի ռեստորանները զգալիորեն առաջ են Հայաստանից՝ շնորհիվ թվայնացման, անձնակազմի վերապատրաստման և սննդային թափոնների կառավարման ավելի զարգացած քաղաքականությունների:

Որակական հարցազրույցների արդյունքում առանձնացվել են նաև սննդային թափոնների ձևավորման հիմնական պատճառները (հաճախորդների կողմից գերպատվիրումը, չափաբաժինների մեծությունը, մատակարարների հետ կապված խնդիրները, հաճախորդների ոչ բավարար իրազեկվածությունը): Միաժամանակ արձանագրվել են հաջողված գործելակերպեր, ինչպիսիք են չափաբաժինների օպտիմալացումը, թվային ճաշացանկերի կիրառումը, սննդի մնացորդների վերաբաշխումը աշխատակիցներին կամ կարիքավոր խմբերին, սննդի նվիրատվության և վերաօգտագործման ծրագրերը:

«Սննդային թափոնների կառավարման կատարելագործման ուղիները նորարար բիզնես մոդելի ներդրման համատեքստում» ենթաբաժնում ուսումնասիրվել են սննդային թափոնների կրճատման հնարավորությունները սպառման փուլում՝ կենտրոնանալով հատկապես Երևանի և Հայաստանի քաղաքային միջավայրի վրա: Ատենախոսն անդրադարձել է սպառողների վարքագծին և սննդի երկրորդային օգտագործման նկատմամբ նրանց վերաբերմունքին:

2025 թվականին իրականացված առցանց հարցմանը մասնակցել է 157 մարդ Երևանից և ՀՀ մարզերից: Արդյունքները ցույց են տվել, որ թեև հարցվածների միայն 3.2%-ն է մշտապես տուն տանում ռեստորաններում չսպառված սնունդը, միաժամանակ 91.72%-ը դրական կամ չեզոք վերաբերմունք ունի այդ պրակտիկայի նկատմամբ: Սա վկայում է, որ առկա է տարբերություն մարդկանց վերաբերմունքի և իրական վարքագծի միջև, ինչը պայմանավորված է սոցիալական նորմերով, անհարմարության զգացումով և մշակութային կարծրատիպերով:

Հետազոտությունը նաև բացահայտել է, որ հարցվածների 63.06%-ը երբևէ չի ստացել ռեստորանների կողմից առաջարկ՝ տուն տանելու մնացած սնունդը: Սա ցույց է տալիս, որ հանրային սննդի կազմակերպությունները կարող են կարևոր դեր ունենալ սննդային թափոնների կրճատման գործում՝ հաճախորդներին ակտիվորեն առաջարկելով փաթեթավորել և վերցնել չսպառված սնունդը:

Սննդային թափոնների նվազեցման նախաձեռնությունների գնահատման արդյունքում առավել բարձր միավորներ են ստացել չսպառված սննդի բարեգործական կազմակերպություններին տրամադրումը (3.91 միավոր), չափաբաժինների ճկուն համակարգի ներդրումը (3.80 միավոր) և «Too Good To Go» սկզբունքով գործող հավելվածի ստեղծումը (3.82 միավոր): Հատկանշական է, որ նման հավելվածի գաղափարը հավանության է արժանացել ինչպես Երևանի, այնպես էլ մարզերի բնակիչների շրջանում, ինչը վկայում է դրա բարձր տեղայնացման ներուժի մասին:

Հետազոտության հիման վրա մշակվել է «Too Good To Go»-ի տրամաբանությամբ գործող նորարար բիզնես մոդելի կտավ, որի նպատակն է միավորել ռեստորանները, սուպերմարկետները, սրճարանները և այլ սննդի մատակարարներին՝ օրվա վերջում մնացած սննդամթերքը զեղչված գներով վաճառելու համար: Մոդելի արժեքային առաջարկը հիմնված է սննդային թափոնների կրճատման, սպառողների համար մատչելի գներով սննդի ապահովման և բիզնեսների ֆինանսական կորուստների նվազեցման վրա:

Կատարված ֆինանսատնտեսական մոդելավորումը ցույց է տվել, որ նախագծի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 650 հազար ԱՄՆ դոլարի սկզբնական ներդրում: Հինգ տարվա ընթացքում նախատեսվում է գործընկեր կազմակերպությունների թվի աճ՝ 150-ից մինչև 900, իսկ պատվերների ծավալի զգալի ընդլայնում: Ըստ հաշվարկների՝ նախագիծը երրորդ տարուց դառնում է շահութաբեր, հինգերորդ տարում ապահովում է շուրջ 766 հազար ԱՄՆ դոլարի զուտ շահույթ, իսկ ներդրման վերադարձման ժամկետը կազմում է 3.83 տարի:

Ֆինանսական արդյունավետության հիմնական ցուցանիշները ևս դրական են. զուտ ներկա արժեքը (NPV) կազմում է 123,319 ԱՄՆ դոլար, իսկ ներքին եկամտաբերության նորման (IRR)՝ 27.3%, ինչը գերազանցում է ընդունված 20% զեղչման դրույքը: Այս արդյունքները վկայում են, որ սննդային ավելցուկների իրացման թվային հարթակը կարող

է լինել ոչ միայն բնապահպանական և սոցիալական, այլև տնտեսապես կենսունակ և ներդրումային տեսանկյունից գրավիչ նախաձեռնություն:

Ընդհանուր առմամբ, հետազոտությունը հիմնավորում է, որ «Too Good To Go» մոդելի տեղայնացված տարբերակի ներդրումը Հայաստանում կարող է դառնալ սննդային թափոնների կանխարգելման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջանաձև տնտեսության զարգացման կարևոր գործիք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է մի շարք կարևոր արդյունքներով:

Առաջին՝ գնահատվել է սննդային թափոնների կանխարգելմանն ուղղված նորարարական բիզնես մոդելի տեղայնացման ֆինանսատնտեսական իրագործելիությունը Հայաստանի Հանրապետությունում, ինչը հնարավորություն է տալիս գործնական հարթությունում քննարկել ոլորտում մասնավոր նախաձեռնությունների խթանման հեռանկարները:

Երկրորդ՝ fsQCA մեթոդաբանության կիրառմամբ իրականացվել է Հայաստանի և Հունաստանի հանրային սննդի կետերում սննդային թափոնների կառավարման համեմատական վերլուծություն, որի արդյունքում հիմնավորվել են ՀՀ ռեստորանային ոլորտում սննդային թափոնների նվազեցման համար անհրաժեշտ և բավարար պայմանների համակցություններ:

Երրորդ՝ տնտեսաչափական մեթոդների օգնությամբ գնահատվել է ԵՄ-27 երկրներում սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը սննդային թափոնների ծավալների վրա, ինչը հնարավորություն է տվել հիմնավորել Հայաստանի համար առաջնահերթ քաղաքական և կառավարչական միջամտությունների ուղղությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կասկած չի հարուցում: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների կողմից՝ սննդային թափոնների կառավարման քաղաքականության կատարելագործման, օրենսդրական փոփոխությունների և ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում: Միաժամանակ, դրանք կարող են կիրառություն գտնել մասնավոր հատվածում, հատկապես հանրային սննդի, մանրածախ առևտրի և վերամշակման ոլորտներում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության վերաբերյալ հիմնական դիտողությունները և նկատառումները հանգում են հետևյալին.

1. Թեպետ ատենախոսը ներկայացրել է Հունաստանի փորձառության ուսումնասիրության շարժառիթը, այդուհանդերձ, կարծես, հատկանշական ինչ-որ բաների չենք հանդիպում, ինչպես, օրինակ, Գերմանիայի դեպքում: Այս առումով, ցանկալի կլիներ աշխատանքում անդրադառնալ ֆուդշեյրինգին (անգլ. *foodsharing,* food՝ «սնունդ», share — «կիսվել, համատեղ օգտագործել»)), ֆուդսեյվինգին, որոնք, սկիզբ առնելով Գերմանիայում, լայն տարածում են ստացել Եվրոպայում:
2. «Սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության գնահատումը սննդային թափոնների ծավալի վրա ԵՄ-27 երկրներում» 2.3 մասում էկոնոմետրիկ մոդելի

կիրառմամբ ստացված արդյունքների առնչությամբ ատենախոսը նկատում է. *«Հաշվի առնելով ՀՀ զարգացող տնտեսությունը, ինչպես նաև վերջին տարիներին Արևմուտքի և հատկապես ԵՄ-ի հետ խորացող հարաբերությունները՝ նպատակահարմար է դիտարկել ԵՄ-27 երկրներում սոցիալ-տնտեսական գործոնների և սննդային թափոնների ծավալների միջև հայտնաբերված փոխառնչությունների հնարավոր կիրառելիությունը ՀՀ համատեքստում: Թեև նշված կապերը ներկայում կարող են ամբողջությամբ չարտահայտվել Հայաստանում, սակայն տնտեսական զարգացման, սպառողական վարքագծի փոփոխության և եվրոպական քաղաքական օրակարգերի հետ աստիճանական մոտարկման պայմաններում դրանք կարող են արդիական դառնալ նաև ՀՀ-ի համար»*:

2.1. Սա ենթադրություն է, որի ապացույցը կարող էր լինել նույնպիսի վերլուծությունը ՀՀ տվյալների օգտագործմամբ, ինչն ավելի արժեքավոր կդարձներ աշխատանքը:

2.2. Բացի դրանից, սննդի թափոնների հիմնախնդիրը համաշխարհային է և պարտադիր չէ, որպեսզի այս կամ այն պետությունը քաղաքականություն մշակի ելնելով եվրոպական քաղաքական օրակարգերի մոտարկումից:

2.3. Մոդելում, կարծես, անտեսվել է սննդի թափոնների առաջացման մշակութային կողմը: Այսպես, մոդելում դիտարկվում է միայն մշակութային գործոնի կամ մշակութային կապիտալի, Պիեռ Բուրդյոյի նկարագրած, երեք վիճակներից մեկը՝ ինստիտուցիոնալացվածը (բակավրաիական և մագիստրոսական կրթություն), հաշվի չեն առնվել ներառված և առարակայացած վիճակները:

3. Անհասկանալի է, թե ինչ է նկատի ունեցել ատենախոսը հետևյալ արտահայտությամբ «Չնայած կրթական մակարդակը (ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի մակարդակներ) և շրջակա միջավայրի հարկային եկամուտներն ունեն բարձր կոռելյացիա, սակայն դրանք ներկայացնում են հայեցակարգային առումով տարբեր ոլորտներ՝ սոցիալական կապիտալն ընդդեմ շրջակա միջավայրի քաղաքականության.... » (էջ 73)

4. Աշխատանքի կառուցվածքը. ա) նպատակահարմար կլիներ 3.1-ը ներառել 2-րդ գլխում՝ վերջինիս վերնագիրը վերաձևակերպելով հետևյալ կերպ. «Հայաստանում սննդային թափոնների կառավարման հիմնախնդիրները՝ միջազգային փորձի խորապատկերին», իսկ 3-րդ գլխի վերնագիրը՝ «Հայաստանում սննդային թափոնների կառավարման բարելավման հնարավոր ուղիները»:

Նշված դիտողությունները կրում են հիմնականում առաջարկությունների բնույթ և չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական արժեքն ու գործնական նշանակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սեղմագիրը և հրապարակված աշխատանքները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում (3՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, 2-ը Scopus, 1-ը՝ Web of Science) և արտացոլում են հեղինակի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Սարգիս Հովհաննեսի Գևորգյանի «Սննդային թափոնների կառավարման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն գիտահետազոտական աշխատանք, որն առանձնանում է արդիականությամբ, գիտական նորույթով, տեսական հիմնավորվածությամբ և գործնական նշանակությամբ: Ատենախոսությունը համապատասխանում է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ՀՀ-ում գործող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գ. Ի. Վարդանյան

24 հունիսի, 2026 թ.

Պրոֆեսոր Գ. Ի. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար

Մ. Վ. Հովհաննիսյան

«24» 06 2026 թ.